



Արթիկ

Հանրապետության միջին մեծության քաղաքներից է, Շիրակի մարզի երկրորդ քաղաքը:

2012թ. տվյալներով քաղաքն ունի 17384 բնակիչներ, ընտանիքների թիվը 5200 է:

Արթիկը ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհներով կապված է մարզկենտրոնի և մայրաքաղաքի, ինչպես նաև հանրապետության մայրուղի ճանապարհների հետ: Քաղաքը երկաթուղային կապով կապված է Գյումրիի հետ, իսկ ավտոմոբիլային կապով կապված է Երևան-Սպիտակ և Երևան-Գյումրի հանրապետական նշանակության ճանապարհների հետ: Հեռավորությունը Երևանից 120 կմ է, իսկ Գյումրիից՝ 28կմ:


Համայնքի վարչական տարածքը 350 քառ. կմ է, քաղաքի կենտրոնը գտնվում է ծովի մակերևույթից 1770մ բարձրության վրա:

Արթիկը Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է, այդ մասին են վկայում քաղաքի տարածքում պահպանված բազմաթիվ մշակութային, նյութական հուշարձանները: Պահպանված մշակութային կոթողներից են Լմբատավանքի Մբ. Ստեփանոս եկեղեցին /7-րդ դար/ և ներկայիս Արթիկ քաղաքի տարածքում պահպանված երկու եկեղեցի՝ Մբ. Գևորգ /7-րդ դար/ և Մբ. Աստվածածին /6-րդ դար/: Քաղաքի բուռն զարգացումը սկսվում է խորհրդային տարիներին՝ հիմնականում պայմանավորված լինելով քաղաքի ընդերքում գտնվող վարդագույն տուֆ քարի արդյունահանման, քարհանքերի շահագործման և մի շարք այլ ձեռնարկությունների կառուցման հետ:

Մինչ 1988 թվականի ավերիչ երկրաշարժն ու շրջափակումը քաղաքում գործում էին 10-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ՝ 3000-ից ավել աշխատողներով: Սակայն ներկայումս այդ թվերը կտրուկ նվազել են՝ նախկին տնտեսական կապերի քայքայման և իրացման շուկաների բացակայության պատճառով:

Ներկայումս քաղաքում աշխատող ձեռնարկություններն են տուֆ քար արտադրող հանքերը, երեսպատման սալիկների արտադրամասը, ապակե

տարրաների համար մետաղե կաղապարներ արտադրող <<Ստեկլումաշ>> գործարանը, մետաղապլաստե դուռ, լուսամուտ արտադրող մի քանի արտադրամասերը, ավրադացը, հացամթերքների 5-6 արտադրամասերը և այլն: Ներկայումս քաղաքի կարևոր հիմնախնդիրներն են նոր աշխատատեղերի ստեղծումը, բարեկարգ, որակյալ ճանապարհների կառուցումը, ոռոգման համակարգի ստեղծումը, մաքուր խմելու ջրով բնակչության ապահովումը, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգումը, նրանց բակերի բարեկարգումը և այլ հարցեր:

Երկիր	 Հայաստան
Մարզ	Շիրակի
Հիմնադրված է	1939
Տվյալ կարգավիճակում	1945-ից
Մակերես	31,5 կմ ²
Բարձրություն ծովի մակարդակից	1 859 մ
Կլիմայի տեսակ	507
Խոսվող լեզուներ	Հայերեն
Բնակչություն	17384 ^[1] մարդ(2012)
Ազգային կազմ	Հայեր
Կրոնական կազմ	Հայ Առաքելական եկեղեցի
Տեղաբնականուն	Արթիկցի
Ժամային գոտի	UTC+4
Հեռախոսային կոդ	+374 (244)
Փոստային ինդեքսներ	3001-3007
Ավտոմոբիլային կոդ	27